

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ռուբեն Ռուբենյանը (ծնված 09.12.1999թ., ք. Երևան, բնակվող Ազատության փ. տուն 3, չի աշխատում, սովորում է թիվ 111 դպրոցում, նախկինում չդատված) և Շուշան Շուշանյանը (ծնված 15.11.2001թ., ք. Երևան, բնակվող Ազատության փ., շ. 8, բն. 53, չի աշխատում, սովորում է թիվ 111 դպրոցում, նախկինում չդատված ...) ապրել են նույն բակում և «ընկերություն» արել՝ հաճախակի հանդիպել Շուշան Շուշանյանի տանը, «ֆեյսբուք» սոցիալական ցանցի միջոցով շփվել, իրար ուղարկել ինտիմ բնույթի նկարներ: Այդ նկարները նա ցույց է տվել իր ընկեր Կարեն Կարենյանին (ծնված 15.11.1998թ. Ազատության փ. 3 շենք, բն. 18, չի աշխատում, սովորում է Ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտի 1-ին կուրսում, նախկինում չդատված ...), որը, սակայն, կասկածի տակ է դրել այդ նկարների իսկությունը: Ցանկանալով ընկերոջը ապացուցել, որ դրանք կեղծված չեն, Ռուբեն Ռուբենյանը որոշեց հանդիպումներից մեկի ժամանակ Կարեն Կարենյանին իր հետ տանել ընկերուհու տուն:

2016թ. դեկտեմբերի 10-ին Ռուբեն Ռուբենյանը, տեղեկանալով, որ Շուշան Շուշանյանը տանը միայնակ է, առաջարկել է Կարեն Կարենյանին ընկերակցել իրեն և այցելել Շուշան Շուշանյանին: Շուշան Շուշանյանի տուն հասնելով՝ նրանք տեսել են, որ աղջիկը տանը մենակ չէ, այլ տանն են նաև նրա 9-ամյա եղբայրն ու 7-ամյա քույրը: Ռուբեն Ռուբենյանը Շուշան Շուշանյանին առաջարկել է իր և Կարեն Կարենյանի հետ առանձնաձև սենյակում, ցույց է տվել իրեն ուղարկված վերջինիս ինտիմ բնույթի լուսանկարները և սպառնացել, որ դրանք կտեղադրի ինտերնետ տիրույթում, եթե նա չցանկանա իրենց հետ սեռական հարաբերություն ունենալ:



Ցուցումներ

Կարդացե՛ք տեքստը և պատասխանե՛ք դրա վերջում ներկայացված հարցերից որևէ մեկին:

Առաջադրանքները նախատեսված են կոնկրետ դասի յուրացման աստիճանը, համապատասխան տեսական նյութի հիման վրա ինքնուրույն վերլուծություն կատարելու, ինչպես նաև գրագետ, հստակ և փաստարկված տեսակետ ներկայացնելու Ձեր կարողությունը ստուգելու/պարզելու համար: Առաջադրանքի գնահատման ամենակարևոր չափանիշներն են կառուցվածքը (արդյո՞ք շարադրանքը պարզ է և հետևողական), հասկացումը (արդյո՞ք առաջադրանքի կատարումը վկայում է մատուցված նյութի հասկացման մասին) և գրելու ոճը (պարզ և մատչելի լեզուն):



Մինչև 240 րոպե

Շ. Շուշանյանը ստիպված համաձայնել է և արդյունքում՝ հղիացել:

Ռուբեն Ռուբենյանին և Կարեն Կարենյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի 2-րդ մասով այն բանի համար, որ նրանք ակնհայտ 16 տարին չլրացած Շուշան Շուշանյանին նրա ինտիմ բնույթի լուսանկարները հրապարակելու սպառնալիքի միջոցով հարկադրել են սեռական հարաբերություն ունենալ:

Շուշան Շուշանյանի ծնողներն, իմանալով իրենց աղջկա հղիության մասին, հաղորդում են ներկայացրել ոստիկանության բաժին՝ իրենց հարևանությամբ ապրող Ռուբեն Ռուբենյանին և Կարեն Կարենյանին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Հաղորդման վերաբերյալ նյութեր են նախապատրաստվել ոստիկանության բաժնում, որի արդյունքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածին համապատասխան, որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին, և այն ուղարկվել է տվյալ տարածքի քննչական մարմին՝ նախաքննություն կատարելու համար:

Նախաքննության կատարումը քննչական մարմնի ղեկավարի կողմից հանձնարարվել է քննիչ Սողոմոն Սողոմոնյանին: Քննչական մարմնի ղեկավարն ուղղորդվել է այն մոտեցմամբ, որ Սողոմոն Սողոմոնյանը դեռևս երիտասարդ է, չունի բավարար փորձառություն, նոր է ավարտել իրավաբանական բուհը և Արդարադատության ակադեմիան և բարդ ու բազմաէպիզոդ քրեական գործերի քննության համար դեռևս պատրաստ չէ, և անչափահասների վերաբերյալ գործերի քննությունը հնարավորինս քիչ ջանքեր ու պատրաստվածություն է պահանջում, ուստի վերջինս

լավագույնս համապատասխանում է այդպիսի հանցագործությունների քննությունն իրականացնելու համար:

Կարեն Կարենյանի և Ռուբեն Ռուբենյանի նկատմամբ որոշում է կայացվել կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին՝ 2 ամիս ժամկետով: Սահմանված ժամկետը լրանալուց հետո կալանավորումը երկարաձգվել է ևս 1 ամիս ժամկետով, որի ընթացքում նախաքննությունն ավարտվել է և գործն ուղարկվել դատարան: Դատարանը ևս կալանավորումը թողել է անփոփոխ:

Քննիչ Սողոմոնյանը նախաքննության ընթացքում հարցաքննության համար քննչական մարմին է հրավիրել Շուշան Շուշանյանին, որին ճանաչել է որպես տուժող և հարցաքննել վերջինիս: Տուժողի հետ քննչական մարմին են հրավիրվել նաև տուժողի քույրը և եղբայրը: Մինչ տուժողի հարցաքննության ավարտը, նրա քույրն ու եղբայրը սպասել են քննչական մարմնի միջանցքում: Տուժողի հարցաքննությունը տևել է ավելի քան 5 ժամ, որից հետո հարցաքննության է կանչվել եղբայրը, քանի որ քննիչ Սողոմոնյանը կարծել է, որ նա ավելի ստույգ տեղեկատվություն կարող է հաղորդել Կարենի և Շուշանի հարաբերությունների վերաբերյալ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Ռուբեն Ռուբենյանը 2016 թ.-ի ապրիլի 4-ին՝ վիճաբանության ժամանակ, միջին ծանրության վնաս է պատճառել 18-ամյա Լևոն Լևոնյանի առողջությանը: Քննիչ Սողոմոնյանը նշված դրվագով հարուցել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասով, որոշում կայացրել Լևոն Լևոնյանին ճանաչել տուժող և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածով՝ որոշում կայացրել միացնել Ռուբեն Ռուբենյանի վերաբերյալ քննվող

գործերը:

Նախաքննության ընթացքում կատարված ոտնձգությունների դրվագներով, ձեռք բերելով բավարար ապացույցներ և հիմնավորված համարելով Ռուբեն Ռուբենյանի և Կարեն Կարենյանի մեղավորությունը նրանց մեղսագրվող արարքներում, քննիչը կազմել է մեղադրական եզրակացություն, և այն ուղարկել հսկող դատախազի հաստատմանը, որն էլ, հաստատելով այն, քրեական գործը սահմանված կարգով ուղարկել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: Գործը մուտքագրվել է դատարան և համապատասխան ծրագրի միջոցով պատահականության սկզբունքով մակագրվել քրեական գործեր քննող դատավոր Մամիկոնյանին:

Դատավոր Մամիկոնյանը քրեական գործն ընդունել է վարույթ և նշանակել դատաքննություն: Դատական նիստերը տեղի էին ունենում դատավորին հատկացված քրեական գործերի քննության համար հարմարեցված և կահավորված դատական նիստերի դահլիճում:

Դատավոր Մամիկոնյանը, ղեկավարվելով քրեադատավարական օրենսդրությամբ, դատական նիստին հրավիրել է նաև տուժողի ծնողներին և նրանց համաձայնությամբ տուժող Շուշանյանի մորը նշանակել նրա օրինական ներկայացուցիչ: Իսկ հարցաքննության իրականացման համար դատավոր Մամիկոնյանը գրություն է ուղարկել այն դպրոց, որտեղ սովորում է տուժող Շուշանյանը՝ դատական նիստին մանկավարժի մասնակցությունն ապահովելու համար թեկնածություններ ներկայացնելու նպատակով: Դպրոցից դատարան ներկայացվել են դպրոցի աշխարհագրության ուսուցիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու,

մասնագիտական ասպարեզում հայտնի միջազգային սեմինարների մանակից, 50-ամյա Մարտին Խաչատրյանի և Շուշան Շուշանյանի դասարանի դասղեկ, մանկական հոգեբանության ոլորտի մասնագետ 30-ամյա Գոհար Ֆարմանյանի թեկնածությունները:

Դատական քննության ընթացքում տուժողի օրինական ներկայացուցիչը դիմում է մուտքագրել դատարան՝ նրանից խնդրելով պաշտպանության միջոցի կիրառում տուժողի և վկաներ՝ տուժող Շուշանյանի եղբոր և քրոջ համար՝ որպես հիմնավորում նշելով, որ առկա է անհանգստություն մեղադրյալի կողմից հետագայում հաշվեհարդար տեսնելու առումով:

Դատավոր Մամիկոնյանը որոշեց Շուշանյանի քրոջ և եղբոր նկատմամբ կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 98¹ հոդվածի 12-րդ կետով նախատեսված անվտանգության միջոց՝ դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը առանց նրա ինքնության մասին տեղեկությունների հրապարակման: Իսկ Շուշանյանի նկատմամբ նման միջոց կիրառելու անհրաժեշտություն չտեսավ՝ պայմանավորված նրանով, որ տուժողը նախաքննության ընթացքում ցուցմունք է տվել և նրա նկատմամբ անվտանգության որևէ միջոցի կիրառումն աննպատակահարմար է:

Գործի քննության ժամանակ Մամիկոնյանը գնահատեց նախաքննության ժամանակ ներկայացված ապացույցները, Ռուբեն Ռուբենյանի դպրոցից ներկայացված բնութագիրը, հարցաքննեց Կարեն Կարենյանին, Ռուբեն Ռուբենյանին, ապա Մարտին Խաչատրյանի ներկայությամբ՝ Շուշան Շուշանյանին և վճռեց.

Կարեն Կարենյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 140-ի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարման մեջ և դատապարտել ազատազրկման 1 տարի ժամկետով՝ միաժամանակ որոշում կայացնելով պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին և սահմանեց փորձաշրջան 2 տարի ժամկետով:

Ռուբեն Ռուբենյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 140-ի 2-րդ մասով նախատեսված և 113 հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման մեջ և դատապարտել հանցագործությունների համակցությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 113-ով նախատեսված հանցանքի համար՝ ազատազրկման 1 տարի, հոդված 140-ով նախատեսվածի համար՝ 2 տարի ժամկետով:

1. **Համապատասխանո՞ւմ է արդյոք քննչական մարմնի ղեկավարի գործողությունը անչափահասների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի պահանջներին, թե՞ ոչ և ինչպիսի՞ պահանջներ են առկա այս հարցի վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական ակտերում:**
2. **Անհրաժեշտ է վերլուծել քննիչ Սողոմոնյանի գործողությունները՝ ցույց տալով այն դատավարական խախտումները, որ թույլ են տրվել նրա կողմից:**
3. **Ո՞ր դեպքերում կարող է անչափահասի նկատմամբ կիրառվել կալանքը՝ որպես խափանման միջոց:**
4. **Ի՞նչ պահանջներ են առկա միջազգային իրավական**

ակտերում՝ պայմանավորված անչափահասների վերաբերյալ քրեական գործեր քննող դատարանի հետ: Առկա՞ է արդյոք մասնագիտացում ՀՀ դատական համակարգում:

5. Ինչպիսի՞ կազմակերպա-տեխնիկական պահանջներ են առկա անչափահասների մասնակցությամբ դատական նիստերի վերաբերյալ:
6. Մանկավարժի ընտրության հարցում ու՞մ պետք է տրվի նախապատվությունը և ինչո՞ւ:
7. Անվտանգության միջոցի, դրա կոնկրետ տեսակի կիրառման կամ չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս ի՞նչ գործոններով պետք է դատարանը ղեկավարվի:
8. Ի՞նչ գործոնների դատարանը պետք է ուշադրություն դարձնե՞ր Ռուբեն Ռուբենյանի նկատմամբ պատիժ նշանակելիս կամ քրեաիրավական արձագանքման այլ միջոց կիրառելիս: Իրավաչափ է արդյոք Ռուբեն Ռուբենյանի նկատմամբ կիրառված պատիժը՝ միջազային իրավական կանոնակարգումների լույսի ներքո: